ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/13

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ախտորոշման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Սիուն» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ. ներկայացված (29.01.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/13 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Սիուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Սիուն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 24.01.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 2020 թվականի հունվարի 20-ին «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է

«ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17» ծածկագրով գնանշման հարցման հրավեր: Հրավերով սահմանվում է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, հայտարարության հրապարակման օրվանից հաշված 8-րդ օրը (20.01.2020թ.) ժամը 11:00-ին:

Հայտարարված գնանշման հարցման հրավերի ուսումնասիրության ընթացքում Ընկերությունը հայտնաբերել է որոշակի անհամապատասխանություններ, որոնք, ըստ Ընկերության, սահմանափակում են հնարավոր մասնակիցների՝ վերոնշյալ ընթացակարգով հայտարարված մրցույթին մասնակցելու հնարավորությունը:

Մասնավորապես, հրավերով սահմանվում է, որ հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս: Նույն հրավերով սահմանվում է, որ հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության առ 10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն որոշման (Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-Ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 1454-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին) 11-րդ կետի՝ 34-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի

սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով:

Այս պահանջին չհամապատասխանող հրավեր հրապարակելու դեպքում, փաստացի, սահմանափակվում է համակարգում գրանցված այլ անձանց (ոչ ռեզիդենտ, ՌԴ դաշնությունում գրանցված կազմակերպություններ) մասնակցությունը ընթացակարգին:

Փաստացի, Պատվիրատուն միայն հրավերի հայտարարությունն է հրապարակել նաև ռուսերեն լեզվով, իսկ հրավերի տեքստը՝ ներառյալ տեխնիկական բնութագիրը, պահանջվող հավելվածներն ու մնացած փաստաթղթերը, հրապարակված են միայն հայերեն լեզվով:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17» ծածկագրով գնանշման հարցման պատվիրատուի գնումների համար պատասխանատու ստորաբաժանման չեղյալ հայտարարել «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17» գնանշման հարցման ընթացակարգը:

«Սիուն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 31.01.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>2. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի համար ընդունելի է «Սիուն» ՍՊԸ-ի բողոքի պահանջը, այն է չկայացած հայտարարել Ընթացակարգը և քանի որ Ընթացակարգը հրապարակվել է ախտորոշման սարքեր ձեռք բերելու համար, որոնց ձեռքբերումը ներկա պահին Պատվիրատուն համարում է խիստ անհրաժեշտ, ուստի Պատվիրատուն խնդրել է թույլ տալ Ընթացակարգը չկայացած հայտարարել մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու

սահմանված ժամկետը և հնարավորություն տալ ավելի շուտ սկսել նոր ընթացակարգի կազմակերպման գործընթացը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 31.01.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը www.gnumner.am կայքում հրապարակվել է 20.01.2020թ.:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սիուն» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ. ներկայացված բողոքը, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի դիրքորոշումը, «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

<u>3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:</u>

Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում և սույն օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հայերեն, իսկ **<u>գնումների, այդ թվում՝ նախաորակավորման հայտարարությունները՝ նաև անգլերեն և ռուսերեն:</u>**

2. Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: **<u>Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը</u>**, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են **<u>նաև ռուսերեն լեզվով:</u>** Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

Այսպիսով՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը www.gnumner.am կայքում հրապարակվել է 20.01.2020թ.:

Միևնույն ժամանակ «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը www.gnumner.am կայքում հրապարակվել են միայն հայերեն:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները և չեն ապահովվել ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերի՝ վերոհիշյալ նորմերով սահմանված լեզուներով հրապարակված լինելու պահանջի կատարումը:

Գտնում եմ, որ «Սիուն» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սիուն» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**